ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 02/18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 21 մայիսի 2018թ.

Նիստին մասնակցում էին ավագանու 12.03.2018թ. N22-Ա. որոշմամբ ստեղծված սոցիալական, առողջապահության, բնության պահպանության հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նախագահ Հայկ Վարդևանյանը, անդամներ Ավետիք Ասոյանը, Արգամ Շառոյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանը:

Նիստը վարում էր Հանձնաժողովի նախագահ Հայկ Վարդևանյանը:

Օրակարգում՝

1.<<Առողջ սունկ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործունեության մասին:

Հանձնաժողովի նախագահ Հայկ Վարդևանյանը ներկայացրեց Բյուրեղավանի համայնքապետարանում մուտքագրված Բյուրեղավան համայնքի Նուռնուս և Բյուրեղավան բնակավայրերի բնակիչների դիմումը՝ <<Առողջ սունկ>> ՍՊԸ-ի Բյուրեղավանի մասնաճյուղի գործունեության վերաբերյալ:

- Դիմումում բնակիչները ներկայացրել են, որ 2014թվականից ի վեր բողոքել են <<Առողջ Սունկ>> ՍՊԸ-ի Բյուրեղավանի մասնաճյուղի կողմից ՀՀ քաղաքաշինական և բնապահպանական նորմերի կոպիտ խախտումներով իրականացվող արտադրական գործունեության պատճառով առաջացած թունավոր արտանետումների, գարշահոտության դեմ:

Ավետիք Ասոյանը նշեց, որ <<Առողջ Սունկ>> ՍՊԸ-ի տնօրինությունը իբրև արդարացում ներկայացնում է մոտ 400 աշխատատեղով ապահովելու խնդիրը, մինչդեռ աշխատողների ընդհանուր թիվը կազմում է մոտ 50 հոգի, որից մոտ 15 հոգին են Բյուրեղավան համայնքից, ընդ որում մեկ ամսից ավելի չեն կարողանում աշխատել՝ գարշահոտության պատճառով:

Բնակիչները դիմել են պետական տարբեր մարմինների, փակել <<Առողջ Սունկ>> ՍՊԸ-ի Բյուրեղավանի մասնաճյուղ տանող ճանապարհը՝ պահանջելով հարցին լուծում տալ և տեղափոխել արտադրամասը՝ ապահովելով ՀՀ քաղաքաշինական և բնապահպանական նորմերին համապատասխան սանիտարական գոտու պահպանումը: Արձագանքելով խնդրին՝ 2015թվականի օգոստոսին ՀՀ Կոտայքի մարզպետի որոշմամբ ստեղծվել է հատուկ հանձնաժողով, որի մեջ ներառվել են մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների, ՀՀ առողջապահության, բնապահպանության և արտակարգ իրավիճակների նախարարությունների, ՏԻՄ մարմինների ներկայացուցիչներ, բնակիչներ ու <<Առողջ Սունկ>> ՍՊԸ-ից ներկայացուցիչներ: Հանձնաժողովի նպատակն է եղել բազմակողմանիորեն ուսումնասիրել խնդիրը և տալ եզրակացություն:

Հանձնաժողովը մանրամասն դիտարկումներից ու ուսումնասիրություններից հետո, աշխատանքների արդյունքները անհապաղ նույն թվականի սեպտեմբերի 19-ին կայացած նիստում ընդունված արձանագրությամբ անդրադարձել է ինչպես վերոնշյալ քաղաքաշինական և բնապահպանական նորմի կիրառելիությանը, այնպես էլ՝ իրականացված ստուգումներին, փորձաքննությունների արդյունքներին, նաև նիստի ժամանակ ներկայացվել են եզրակացություններ և մշակվել առաջարկներ:

Նիստի ժամանակ Հանձնաժողովի անդամները որոշեցին կրկին անգամ այցելել <<Առողջ Սունկ>> ՍՊԸ-ի տարածք: Նրանց պնդմամբ համատարած գարշահոտություն էր: Ընդ որում՝ ընկերության աշխատակիցներից մեկը անդամներին հավաստիացրել էր, որ ներկա պահին գարշահոտությունը բավականին նվազել է՝ արտադրության ծավալի մոտ 60 %-ի չափով նվազելու հետևանքով: Հետևաբար, եթե նորից մեծ ծավալով արտադրություն ձեռնարկվի, ոչ մի երաշխիք չկա՝ խեղդող գարշահոտության տարածման համար:

Ընկերության աշխատակցի տեղեկացմամբ ընկերությունը համալրվել է նոր զտող սարքավորումներով: Բայց, ինչպես ասաց Հանձնաժողովի անդամ Արգամ Շառյանը, Բյուրեղավանի տեղադիրքի, մշտական քամիների հետևանքով ոչ մի սարքավում չի կարող վերացնել գարշահոտության խնդիրը: Ուստի ճիշտ կլինի ընկերությունը տեղափոխել այլ՝ բնակավայրերից առնվազն 1-3 կիլոմետր հեռու:

Քննարկումից հետո որոշվեց՝

1.Ավագանու նիստին ներկայացնել ուղերձի նախագիծը՝ ուղղված Հայաստանի Հանրապետության վարչապետին՝ <<Առողջ Սունկ>> ՍՊԸ-ի Բյուրեղավանի մասնաճյուղի գործունեության մասին:

Կից ներկայացվում է ուղերձի նախագիծը:

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝	_____	Հայկ Վարդևանյան
	_____	Ավետիք Ասոյան
	_____	Արգամ Շառյան